



104. ԹԱԳԱՎՈՐ ՈՒ ՆԱԶԻՐ

Արարատանա թագավոր Հարոն-հարոն օր մե կը հարցու ուր
նազիրին.

— Նա՛զիր, դու ընձի ի՞նչ խոհեր կը սիրիս:

— Թագավոր ապրած,— կըսե նազիր,— ես քու չոտաց հողն իմ,
հմալ հարց չորի՞ն կիտաս ընձի:

— Կը հարցում, թե ընձի ի՞նչ խոհեր կը սիրիս. օղորդ ըսե, թե
չէ՛ դուխդի կէրթա:

Նազիր կըսե.

— Իմալ օր դու կը սիրիս քո չոտաց հողին, ընդոնե չեվելի էնի
կը սիրե քըզի:

— Չէ՛,— կըսե Հարոն-հարոն,— էրկու մարդ չիրար չըն կոնա
հավասար սիրի, մեկ՝ չեվել, մեկ պակաս:

— Թըղ քո կամքն էղնի: Հմա զէդ հարցի պատասխան թե գու-
զիս օղորդ չիմնաս, արի զմեք խլըխ փոխինք, մտնանք մըջ ժողո-
վուրդ, էն վախտ չըմեն՝ բան տեղըրտեղ պարզ կէղնի:

— Աղե՛կ,— կըսե Հարոն-հարոն,— ա՛րի չիրկունսի մտնանք մըջ
ժողովուրդ:

Կըսին, դեւնան զխլըխ ուրանց կը փոխին, կը հագնին աղքատ
դերվըշու շորեր, մեկ-մեկ տոպրակ կը կախին փիջանուց, մեկ-մեկ
փետ կառնին ձեռ ուրանց, կը մտնան մըջ ժողովուրդ: Կէրթան,
կէրթան, կը մոտենան հոլըքի պես տան մե, կը կանին ջեմքին, կը

տեսնան հանդիս խորհրդակ պառավ կնիկ մե նստուկ՝ վիռա-վիռա բուշ կը գործե, հետ լե գիլա: Ըդոց կը տեսնա՝ հմա շան տեղ չը դնե: Նազիր, յանի թե նեղսրտած, ձեն կիտա պառվուն:

— Գրողի՛ տարուկ, անդարդ նստեր իս՝ քրզի-քրզի բուշ կը գործիս, չը լսե՛ր իս՝ քու թագավոր հանդի հիվանդ՝ կը մեռնի:

Պառավ զգլուխ կը վերցու, կըսե.

— Խարա-խիյամթուն, թե կը մեռնի. օր իրեք օր չառեջ մեռնեք, չեվելի աղեկ կէղներ: Ես, անոթի ու ծառավ, իգա ցրտին նըստուկ բուշ կը գործիմ, տանիմ ծախիմ, քանիմ՝ գոռ ըբրիմ տուն, հաց գնիմ՝ անոթնե չը մեռնիմ, էլման էն աղքատն իմ ու էն աղքատ: Թագավոր օր սաղ-սալամաթ մնեք՝ իմ ցավ կը պակսե՛ր:

Նազիր կը դառնա թագավորին.

— Տեսա՛ր, էդի քու միտք պահե, քելե էրթանք:

Թագավոր ու նազիր զպառավ կը թողին, կէրթան: Կէրթան, Կէրթան, կը հասնին տուն մե, կը կանին շեմքին, կը տեսնան հանդի ջըհել հարս մե նստուկ՝ էրկանք կաղա, գրոգրոց բռներ է շորս դնե: Հարսն օր ըդոց կը տեսնա՝ աղալ կը թողե:

— Տե՛ս,— կըսե թագավոր ուր նազիրին,— ջըհել հարսնուկ մե էրկանք կաղեր, իմալ կէրեա չըսօր շուրվա պտի էփե, յա՛ ապուր, արի քանիմ՝ փարա տանք ըդոր:

— Հլա սաբը էրե, ես բան պտի ըսիմ: Բարի՛ հարսնուկ, անդարդ նստեր իս՝ էրկանք կաղաս. լսե՛ր իս, օր մեր Հարոն-խարոն թագավոր հանդի հիվանդ՝ կը մեռնի:

— Վա՛յ,— կը ճչա հարս,— քոռնա իմ էրկու լուս: Մեր Հարոն-խարոն թագավոր հիվանդ՝ կը մեռնի: Աստծուն ըռջա կէնիմ, օր շուտ աղեկնա, վըր մըզի ուր աչք քաղցր էղնի չառեջվա պես:

Թագավոր կը դառնա նազիրին.

— Էս խո քու չանկըջով լսի՛ր: Պառավ ընձի մահ յուղեց, ջըհել հարս՝ առողջութեն չուղեց ընձի: Տեսա՛ր, օր կըսենք՝ մարդիկ հավասար չըն կոնա սիրի. մեկ՝ շատ, մեկ՝ ըսկի, դու չըր ա՛վտընի: Դե՛, քելե, էրթանք մեր գործին, ժողովրդեն չըսօր բան մը լե սորվանք, էնինք մըզի չանկըջի օղ՝ շուր մահ-գերեզման:

